


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 8 ՄԶԸ.
Վ. Երանյան 10 ՄԶԸ.
Վ. Երանյան 4 ՄԶԸ.
Վ. Երանյան 5 ՄԶԸ.
Ծանուցման առիդ մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կը-
լայ :



ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 9 ՅՈՒԼԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Այս միջոցիս գրեթէ բոլոր աշ-
խարհի ուշադրութիւնը բռնակցի կող-
մէ կատարուած պատերազմական գոր-
ծողութեանց վրայ դարձած է : Քա-
նի մը վաղտ հետեւեալներէ և գունդ-
մը հեծեալներէ բաղկացեալ Ռու-
սական զօրաբաժին մը՝ առանց մեծ
գլխադուլութեան՝ խայլին—Պոլսոյ ա-
նուն կիրճէն անցնելով Պալքաններէն
ապրիլի կը գտնուի : Բէռլին փաշա ՚ի
սկզբան կարծեց թէ Ռուսք ցոյցի հա-
մար այն կողմը կը քաշէին, որպէս զի
իւր ուշադրութիւնն իսկիւնայի ճա-
նապարհին կողմը հրաւիրելով, կապ-
րովա գտնուող Ռուսական զօրքը կա-
րենայ Շիրքայի կիրճէն անցնելու Բայց
ի վերջոյ լսելով որ խայլին—Պոլսոյ
անցնող Ռուսաց թիւը տասներկու
հազար էր, անմիջապէս հոն գնաց
և իւր ՚ի պատրաստութիւնը ունեցած զօրք
թշնամուրն հետ մանր մանր կը
ուրեւնէր ըրաւ, որոց արդիւնքը առ-
կաւին յայտնի չէ : Բայց Ռուսաց այս
զօրաբաժինը քիչ ժամանակի մէջ յա-
ռաջանալուն պատճառաւ կը կար-
ծուի որ կարեւոր օգնութիւններ տա-
ցած է, և այժմ լեռնային լծողա-
նօթներով և բազմաթիւ հեծեալազօ-
րք Ենի-Չաղայի կողմը կը գլա-
նուի :

Ռուսաց այսպէս համարձակութեամբ
և արագապէս Պալքաններէն անցնե-
լուն նպատակն է երկաթուղին քանդե-
լով Սիւլէյման փաշայի բանակին պա-
տերազմի աստղաշէն հասնիլն ուշացնել
և իսկիւնայի կողմը մնալով Տէմիր-
Կաբուլի ճանապարհը պահող Օսման-
եան զօրաց հազարաւորութիւնները
կտրելու սպառնալը : Այս կիրճին տի-
րելով Ռուսք հոն պիտի ամրանան, և
մինչդեռ Պոլսոյ կողմէ Ռուսաց բա-
նակներն Օսմանեան զօրաց գէտմար-
տնային, միւս կողմէն Պալքաններէն
անցնող Ռուսերն ալ Արքիանուպոլ-
սոյ գաւառին վրայ պիտի արշաւեն :
Բայց Ռուսաց այս յատակագիծն որ-
չափ մեծ նոյնչափ ալ վտանգաւոր է-
Պոլսոյ կողմէ մէջ փոքր ձախողութիւն
միջոցն այս արշաւանքը կրնայ վա-
խուստի դարձնել :

Արքիանուպոլսէն առնուած լրոց
նայելով, Ռուսք իսկիւնայի մէջ իրենց
գլխադուլ պահած են, և Գըզանլըզի ու
Շիրքայի մէջ տեղերը պատերազմը կը
շարունակէ եղբւր Ֆիլիպպի գաւառին
Պոլսոյ կողմը : Ռուսաց ներկայութիւնէն
քաշուելով իսկաւ կանայք կը տ-
րատրեն, և իրենց կատարողութեան
այս գլխադուլը զոհերն Արքիանուպո-
լիս հասեր են : Այս վայրագութիւն-
ներն իսկիւնայի և Գըզանլըզի մէջ ե-
ղած գլխադուլն ՚ի գործ կը դուրսն-
ուր Ռուս սպային հրամանաց ներքե-

Պոլսոյ արաւմուկը իրեն օժանդակ
և պահպան զօրք կը գործեն, և
Պալքանի կիրճերն ու գաղտնի ճանա-
պարհները Ռուսաց ցուցնելով կօդ-
նեն : Ֆիլիպպի գաւառին իսկաւ բը-
նակիչը Արքիանուպոլիս կը փախչին :
Վերջին լուրերը կը ծանուցանեն թէ
իսկիւնային Ռուսք Ենի-Չաղայի կող-
մը կը քաշէին : Գարատաղէն եկող
Մէհմետ Սիւլի փաշան Ենի-Չաղայ մը-
տեր է իւր զօրաբաժինով և թշնամ-
ուրն դէմ դրկուել է, որ երկաթու-
ղին քանդուելու համար յառաջ կը
դաշ : Այս կողմերն եղած պատերազ-
մերէն կախեալ կերեւի բռնակցի եր-
կաթուղին բաղդը :

Ռուսաց այս արշաւանքին պատ-
ճառաւ զրոյց ելաւ թէ Պէշիքայի
Անգլիական նաւատորմը Կ. Պոլսոյ
պիտի գայ, որպէս զի մայրաքաղաքս
պաշտպա- Ռուսաց յարձակման դէմ
Բայց Անգլիական կառավարութիւնը
տակաւին այս մասին պաշտօնապէս
առաջարկութիւն չէ ներկայացուցած
Բ. Գրանտ Անգլիոյ կառավարութիւնը
բաշտպան յայտնեց է միայն որ Բ. Գրա-
նտ իւր կամքով հրաւիրէ Բրիտա-
նական նաւատորմը վտանգի ներգր-
ւելու : Բայց տակաւին պարագայներն այն-
չափ տագնապալի չեն որպէս զի կայ-
սերական կառավարութիւնն այս վեր-
ջին միջոցին գիտնու հարկ տեսնէ :
Դանուբի Օսմանեան բանակները տա-
կաւին ամբողջ և կանգուն են, և
չկարծուի որ Ռուսք Պալքանի քանի
մը կիրճերուն տիրելով իսկ կարենան
մինչև Արքիանուպոլիս յառաջ խաղալ
այս վիճակին մէջ :

Ինչպէս արդէն ծանուցած ենք,
Ռուսք Դանուբի եղբրը Նիկոպոլսոյ
ամրոցին վրայ սաստիկ յարձակումներ
ըրին, և երէկ կը զորուէր թէ այս
ամրոցն առած են, թէ և վերջին լու-
րերը կը ծանուցանէին թէ Նիկոպոլ-
սոյ Օսմանեան զօրքը մեծ քաշու-
թեամբ կը կուգէր և իրեն օգնու-
թիւնը կը հասնէին : Ռուսք ալ մեծ
կորուստներ կուտային, սակայն ա-
նոց ալ շարունակ օգնութիւն կու-
գար : Զորքաւորութիւն իրիկուն Ռուսք
Լօֆչա մտեր են. Բայց Բլէշլա տա-
կաւին երեք վաշտ Օսմանեան զօրաց
ձեռք է : Ռուսաց բանակին մեծ մա-
սը Խանթրա գետին կողմը կը գումա-
րէր : Իսկ Տօպրուհայի կողմը Ռուսք
Մէհմետի և Ֆիլիպպիէն գրաւելով
գէպի Մանկալիա կը քաշէին : Ֆիլի-
պպիէն Օսմանեան պաշտօնատար-
ներն անկէ մեկնելու միջոցին՝ քա-
ղաքն հիւսկապատաց հսկողութեան
յանձնած էին : Իսկ հիւսկապատաց ան-
միջապէս ցոյցներէն ոստիկաններ կաղ-
մային և Պոլսոյ արշաւանքը անկարողութիւն
ներն արգելցին : Բայց որովհետեւ
քաղաքն անհիշխանութեան վիճակի
մէջ էր, բնակիչներէն պատգամա-
ւորներ գնացին Ռուսաց Զիմմէթման
զօրապետին խնդրելով որ ֆիլիպպիէն

գրաւէ : Պոլսոյ կողմը ֆիլիպպիէն
մէջ Տաճկաց միլիթը մանկով անար-
գած և աւարտութիւններ ըրած էին,
սակայն Յոյն ոստիկանք անոնց այս
վայրերն ընթացքը զսպած և միլիթը
մաքրելով պահպանութեան ներքե-
դրած են : Ֆիլիպպի հիւսկապատները
բարեկարգութիւնը պահպանելու
համար որոշեցին քրիստոնեայիներէն
խառն ոստիկանութեան զօրք կաղ-
մել :

Սթամպուլ Լրագիրը կը ծանու-
ցանէ թէ Սպարապետ Բէտիֆ փաշան
և Սէրտարը Երբէմ Սպարապետ ֆէրի-
փաշան պաշտօնանկ եղեր են : Բայց
տակաւին այս մասին պաշտօնական տե-
ղեկութիւն մը չկայ :

Կարսի կողմը թշնամի բանակներն
իրարու դէմ նստելով զիրար կը գի-
տեն : Վանայ զօրաբաժինն Օսմանեան
բանակին ալ թեւին հետ միացած է
Գարա-Ֆիլիպպի գաղաթին մէջ և Պա-
յաղիտի մօտ բանակած : Պայաղիտի
քաղաքը բոլորովին պարտուած է և
բնակիչներն ամեն կողմ փախած են :
Ռուսաց ձախ թիւը սահմանադիտոյն
յենով օգնութեան կ'սպասէ եղբւր :
Մուրթար փաշան իւր կեդրոնական
բանակին դուրսը կեցած է վէզէն
քէոյ, Կարսէն քանի մը ժամ հեռու :
Կարսի զօրաց շատ օգնութիւն հա-
սած է, և ամենայն արագութեամբ
առաջամտերը և պաշար ներս կը մտ-
ցնեն : Ռուսաց կեդրոնական բանա-
կը տակաւին Լորիս Մէլիքօֆի զօրա-
վարին հրամանաց ներքեւ է, և իւր
յետո նահանջումը Գարատեղէն ան-
գին չէ շարունակած, ուր օգնութեան
կ'սպասէ, և Միքայէլ Մեծ գումա-
սը զրկել կը ջանայ : Յուլիս 14 ին
քանի մը գումա- Ռուս հեծեալազօրք
թշնամութեանով հետադուրս թիւն
մ'ըրին և մինչև Մուրթար փաշայի
բանակը հասան, Բայց պատերազմ
մ'ըլլալով ետ քաշուեցան : Կարսի
կողմը մեծ ճակատամարտ մը կ'սպա-
սուի : Ռուսք՝ Ասիոյ կողմը կրած ձա-
խողութեանց պատճառ կը բռնեն
իրենց բանակին մէջ գտնուող ռու-
սահայատակ քիւրդերուն փախուստը :
Հետեւաբար զինուորական ատեանի մը
որոշումը և Լորիս Մէլիքօֆի հրամա-
նաւ Ե. Երազ աղա անուն ֆիւրտ գըլ-
խաւոր մը, որ Ռուսիա բնակող ճա-
ֆէր զօրավարին որդին է, և 21 քիւր-
տերէններ կախաղան հանուել են :

Երէկ իրիկունս Սթամպուլ Լրագի-
րին մէջ հետեւեալ լուրերը կը կար-
գանք պատերազմին վրայ :

“Դանուբեան գաւառին մէջ Ռու-
սական զօրաբանակ մը Ռադկրատի
մօտ ցոյց մ'ըրեր է :

“Երկու Ռուսական զօրաբանակ ալ
Տօպրուհայի մէջ յառաջ կը քաշին Օս-
ման Պաղար և ճումա քաղաքաց վը-

ՊԱՅՄԱՆՔ

Կարս գաղաթ լրագրաց ճանրու-
ծ տիրը խմբագրութեան վրայ է :
Լրագրաց վերաբերեալ նամակ
կրտ որ և ինչ գրութիւն խմբագրի-
—Տնօրէնին պիտի ուղղուի, Գաղա-
թիս Ոստիկանը ճանտուի թիւ
198, Կարս խոս, Մասիսի գրաւեն-
եալը :
Ճանրու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր :

Լայ : Հինգ հազար փախուսեալ թուրք
այս վերջին քաղաքն ապաստանեցին :
Ռուսական զօրաբանակ մ'ալ Ման-
կալիայի 4 ժամ մօտ հասած էր Սե ծա-
վուն եղերքէն քիչ հեռու :

“Այս լուրերը տուող հեռագրաց
ամենն ալ կորուստներ կը ծանուցա-
նեն, գլխաւորապէս Պոլսոյ կողմէ
ուր, որք Եսալօ և Տիւրքիս գեղե-
րուն բնակիչներն անխորաբար ջար-
դեցին, և միայն 12 հոգի կը լցնէ մահ-
ւանէ պըծիլ :

“Երկու հարիւր փախուսեալ թաղ-
կըրատ հասան Պոլսոյ կողմէն հալած-
ւելով, որք ճանքան ասոնցմէ տասն
և մէկ կանայք ու տղայք սպանուել է-
լին :

“Ասոնցմէ զատ խաղախներն ալ
Քոստանի և Օսթրանի թուրք իսկաւ
ժողովուրդը ջարդ եցին :

“Պիւլպիւլի գեղին մէջ Ռուս զօ-
րականները կանայք և մանկունք բըռ-
նաբարեցին :

“Թրնօվայի գաւառին մէջ Ռու-
սերն հրաման տուին Պոլսոյ կողմէ
ինքնիւնքին անկախ հրատարակեն
Թուրքիայէն, և յայտնապէս առա-
ւառութեան ու սպանութեան քա-
ջալերեցին զանոնք :

“Մեր Շուքուր թղթակիցը կըսէ
թէ քաղաքին հիւսկապատցին մէջ
վաթսուն կանայք և մանկունք տե-
սեր է սոսկալի կերպիւ վերաւորեալ :

“Ռուսաց Շիրքայի կիրճն անցնե-
լուն առաջին փորձը մեծ կորուստով
ետ մընեցաւ, Բայց երկրորդ փոր-
ձերին գլխադուլաբար յաջողեցին :
որովհետեւ երէկուրէն ՚ի վեր խմբ-
ւած է թէ Ռուսական մեծ զօրաբա-
նակ մը Գըզանլըզն ու Խալի Զաղա-
նի մ'ալ Պալքանապոլսէն երէկուր Սյ-
տուսի կողմէն գէպ ՚ի Պոլսոյ կողմէ
առաջանալու կը քաշէ :

“Երէկ, (հինգ շաբթի) Գարատա-
ղէն եկող զօրաց մէկ մասը Տէտէ-Ս-
ղաճ հասան, մնացեալը ալ ասոնց ե-
տեւէն կուգային և Սիւլէյման փաշան
ալ վերջին շոգեաններէն միոյն մէջ
է, որ հիմա անշուշտ Տէտէ-Սղաճ հա-
սած է :

“Ասիոյ մէջ Ռուսք ամեն կողմէ
ետ քաշուեցան : Իսկ Ռուսիայի կողմէ,
երկու ահեղ պաշտպանողական գի-
ծերէ (Դանուբն ու Պալքանները) գը-
րեթէ առանց պատերազմի անցան :
Արգարե տեղ տեղ դիւցադնական գի-
մադրութիւններ եղան, Բայց փոք-
րակիւ գումադերու կողմէ, որոց վը-
րայ կիլիսան միշտ Ռուսերն՝ զգուշա-
նալով ստուար գունդերէ :

“Անշուշտ մեծ ճարտարութիւն
ի գործ կը դնեն Ռուսք, Բայց ո՞վ
կրնայ համարձակել պիւլպիւլ թէ Օս-
մանեան զօրավարաց կողմէ ալ խոշոր
սխալներ չգործուեցան . . . :

“Հասարակաց կարծիքը մեծապէս

պիտի սկսուի լսելով որ Դանուբեան բանակին սպարապետութիւնը Նա- միգ փաշային յանձնուեր է առ այ- ժըմ, մինչև որ նոր կարգեալ կամ կարգուելիք սպարապետն հոն հաս- նի :

Թրաքի անուն Յոյն լրագիրը Տօպ- րօճայի մէջ գումարեալ Ռուսական զօրութեան վրայ հետեւեալ տեղե- կութիւնները կուտայ՝ առանց ստու- գութեանը երաշխաւորելու :

« Մէճիսիէ քաղաքը գումարող զօ- րաբաժինն 12000 մարդէ կը բաղկա- նայ . 33000 մարդէ բաղկացեալ ու- րիշ զօրաբանակ մ'ալ կ'սպասուէր յիշեալ քաղաքն, ուր Ձիմիէրման զօ- րավարն իւր բանակակերպունը հաս- տատած է : Ձէրնալօտա բանակեալ զօրաբաժինն ալ 12000 մարդ ունի . իսկ Պապատաղ բանակեալը 18000 : Այս վերջին զօրաբաժինը Գիւսթէն- ճէի վրայ կը քալէ ծովեզերքէն : Բայց առանց Գիւսթէնճէ մնալու իւր ըն- թացքը պիտի շարունակէ դէպի հա- րաւ :

« Այս ամեն զօրութեանց նըպա- տակն է միահաղայն Շուսնուի վրայ քալել , երբոր սպասեալ նոր զօրքե- րը գան և իրենց տոժմարաւած դիր- քերը բռնեն :

« Մէճիսիէի մէջ Ռուսները բա- զում նպար և ռազմամթերք գու- մարած են , որ վեց ամիս կրնայ բա- ւել կրնան : Փոխադրութեանց ծա- ռայելու համար Ռուսաց բանակը 6000 կառք կը բերէ իւր հետ : Բիւս- թէնճէի մէջ գտնուած թնդանթի- ներն 330ի կը հասնին , որոց 80ը պա- շարման խոշոր թնդանթիներ են՝ քառասունական եզներէ քաշուած , իսկ մնացեալ 250ը դաշտային թնդ- դանթիներ :

Սթամպուլ լրագիրն մէջ հրատա- րակեալ վերջին մասնաւոր հեռագիր մը կը ծանուցանէ թէ Նիկոպօլի մօտ Օսման փաշայի զօրաբանակը նշանա-ւոր յաղթութիւն մ'ըրբեր է Ռուսաց վրայ :

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Վիէննա 18 յուլիս .
Կէս պաշտօնական թերթերը կը հա-ւատեն թէ Աւստրիա իւր չեղորոշութիւնը պիտի շարունակէ , և թէ ահրաժեշտ այն ժամանակ պիտի գործեն երբոր Ռուսիա զինուորական իրողութիւններէն քաղաքա-կան հետեւանքներ հանէ :

Լոնտրա 18 յուլիս .
Բոլոր լրագիրքը կը խնդրեն՝ յանուն Եւ-րոպայ շահուց՝ որ թոյլ չտրուի Ռուսիոյ Կ. Պօլսը գրաւել մինչև իսկ առժամա-նակեայ կերպիւ :

Լոնտրա 20 յուլիս .
Անգղիոյ մէջ հասարակաց կարծիքը մեծաւ կը յուզուի և բաժնուած է կա-ռավարական մամուլէն բռնած զրից պատ-ճառաւ , որ կը պնդէ թէ Ռուսներն Ադ-րիանուպօլիս հաստած Անգղիոյ կառավա-րութիւնը պէտք է յայտնէ թէ թոյլ չուի-տի տայ որ Ռուսական զօրաբանակ մը Կ. Պօլսու մտնէ :

Ազատամիտ լրագիրքը սաստկապէս կը հերքեն կառավարական լրագրաց պահան-ջումը՝ պնդելով թէ ներկայ պատերազմին անցքերն՝ որչափ և կարևորութիւն ու-նենան , Անգղիոյ շահուց սպառնալիք չեն կրնար համարուիլ , և կը յայտարարեն թէ Անգղիա ոչ թէ Կ. Պօլսոյ՝ այլ Նիկոպ-տոսի վրայ պէտք է հսկէ՝ իրեն շնորհա-տանի ուղին :

Լոնտրա 20 յուլիս .
Պուլտարիոյ և Ասիոյ մէջ Ռուսաց զօր-ծած անդթութիւնները մեծ տպաւորու-թիւն ըրին Անգղիոյ մէջ : Երեսօրօրա-նաց ժողովին անդամներէն ոմանք կա-ռավարութեան հարցում ընելով , Պ. Պուլը խոստացաւ որ այն անդթութեանց վրայ հիւստատուներէն եկած հեռագրերը ժողովին ներկայէ , և ժողովն ալ աղա-տութեամբ դատէ անոնց վաւերականու-թիւնն :

Անգղիոյ լրագիրքը խոսիւ կը կշտա-բեն զՌուսիա Դանուբի բերանը խցանե-լուն համար : Կառավարութիւնն երէկ ի-րիկուն հաւաստեց խորհրդարանին առջև թէ Դանուբի մէջ ընկղմեալ քարայրից նա-

ւերը՝ չորս ոտնաչափ խորութիւն միայն կը թողուն նաւարկութեան համար : Կա-ռավարութիւնը ծանուց նաև թէ Բեդրես-պուրիի անգղիական զենայան Լորտ Լօֆ-թիւսի հրահանգ արուած է՝ որ զեափն այսպէս զոգուելուն վրայ գանգատ ընէ Ռուսիոյ կառավարութեան :

Լոնտրա 19 յուլիս .	
Օսմ. Գոնս .	9 3/16
Փոլս .	1865 9 1/2
•	1869 9 1/8
•	1871 36 1/4
•	1872 16
•	1873 9 1/8
•	Եղիպա . 38 1/4
Անգլ. Գոնս .	94 11/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝
Արքունեաց Ֆէրիզ (Մապէյն Ֆէ-րիզի) Սայիտ փաշան ծովային գոր-ծոց նախարարի տեղապահ անուա-նեցաւ :

Յունական Նէօլոգոս լրագիրն խօս-քին Նայելով , վսեմ՝ Մաֆիէթ փա-շային արտաքին գործոց նախարա-րութեանէ հրաժարելուն պատճառը՝ երեքշաբթի առաւոր նախարարական արտաքոյ կարգի ժողովին մէջ՝ օտար տէրութեանց գենպաններուն կողմէ եղած առաջարկութիւնն մը չընդու-նելու վրայ պնդելի եղածն է : Մինչ-դեռ միւս նախարարք ընդունելու կողմն են եղեր :

Կրուի թէ Սուրէյա չոգենաւը մայրաքաղաքէս վառնա զրկուեր է պատերազմական գործոց նախարարն և Սէրտար—Էքէմը Կ. Պօլսու բե-րելու :

Դատական գործոց նախարար Ա-սիմ փաշային Ագրիանուպօլիս գլու-նուած ժամանակ դատական գործոց նախարարութեան պաշտօնը Միւս-թէշար վահան էֆէնտիին յանձնը-ւեցաւ կայսերական հրամանաւ :

Հինգշաբթի իրիկուն հինգ եղբայ-տական չոգենաւ հասան մայրաքա-ղաքս զօրքով ի , և անմիջապէս ի-րենց ճանրան շարունակեցին ի վարնա :

Երէկ և նախընթաց իրիկունները Բուսթիլի երկաթուղին բաղմոթիւ իյում և Հրեայ ընտանիք բերաւ Եամ-պօլիէն , Ֆիլիպէէն և Ագրիանուպօլ-սէն , որք մեծ մասամբ Պուլշարաց անգթութիւններէն կը փախչին :

Կայսերական հրամանագիր մը կը պատուիրէ խոսիւ և ըստ պարագա-յին մինչև իսկ մահուամբ պատժել Ագրիանուպօլիս կուսակալութեան այն քաղաքային պաշտօնատարներն , որ իրենց պաշտօնը թողլով փախչին :

Ճէրիտէի Հավատիս լրագիրը կը ծանուցանէ թէ Ձէյպէքեբուր վաշ-տերէն մին Աւետիս էֆէնտի անուն հայուն մը հրամատարութեան ներքեւ գրուեր է :

Պետական խորհրդոյ անդամ Բէ-մալ պէյ , որոյ բանաձէն արձակուիլն արդէն ծանուցած ենք , հինգշաբթի օրը Լոյտի շոգենաւով Միւսթիլի կըլ-զին զնաց , ուր երեք ամիս պիտի նստի :

Վիէն. Սուլթանը 15000 զրշ ուղե-ւայ զրկեց Բէմալ պէյին , և հրաման ըրաւ որ 5000 զրշ ալ ամառական վը-ճարուի :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍՉԱՄԸ ՈՒՄՈՒՄԻՆ	
8 յուլիս ուրբաթ իրիկուն	10,14
9 յուլիս շաբաթ առաւօտ	9,26
բացուեցաւ ժամ 6 ին	9,46

Բուսթիլի երկաթուղի	Փր . 27 50
Թողալում	Լր . 177 1/4
ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ	
Կ. Պօլս 8 Յուլիս	
Սոսիթիէ Էլ Նիկոպօլի բաժ .	Անգլ. Լր . 3, 2
• Գիւստանուպօլեան	4,25
Կ. Պօլսի Պաշային	2,95
Գրէտի Էլ Նիկոպ	4,38
Գրէտի Օսթրո—թիւրք	—
Յուլիս 1863	Ֆր . 33
• 1865	53
• 1869	47
• 1872	16 1/2
• 1873	46
Թրամուսյ	Օսմ. Լր . 4 15

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ	
8 Յուլիս	
Անգլ. Լր .	409 32
Նարօլին ոսկի	87 32
Իսթիսիալ Ռուս	9 20
Գլըքսից	51 20
Հինգ ֆրանք	—
Հինգ նոց	4 15
Պլինձ	177

Ա. Չ. Ա. ՅԻՆ

Ճշմարտութեան հակառակողները վաղ կամ անագան իրենց խղճէն կամ բանավարութենէն բռնադատուելով ընդունելու և խոստովանելու կը պար-տաւորին :

Նոր Դար լրագիրն՝ Հայոց զին-ւորական ծառայութեան օգուտնե-րուն վրայ մեր քանի մ'ամիս առաջ ըրած խորհրդածութիւնները խճճե-լէ ետեւ , դո՛հ ենք որ իւր երեքշաբ-թի առաւր թուոյն մէջ կատարեալպէս կընդունի և կը հաստատէ հետեւեալ տողերով :

« Նախ և առաջ գիտնալու է Ադ-գըն ու Գադ. ժողովը որ՝ Հայաստանի պատերազմի ասպարէզ գանուելէն յա-ռաջ եկած զեպժմանց առաջին առ-նելու համար եթէ մէկ կողմէն պաշ-տօնական միջոցներ ձեռք առնուին , միւս կողմէն ալ բարոյական միջոցներ պէտք է . այսինքն՝ եթէ մէկ կողմէն Բ. Դրան գրեթէ դարմանը գտնել պէտք է , միւս կողմէն ալ մահմետա-կան հասարակութեան սիրտը շահիլ անհրաժեշտ է . վասն զի երբ Ռու-սիա բոլոր քրիստոնէից համար կը պատերազմիմ կընէ , բնական է որ ռամիկ Տաճիկը այդ բոլոր քրիստո-նէից կարգը դասելով նաեւ Հայը՝ կարծէ որ Հայն ալ պատճառ եղած է այս պատերազմին , հետեւաբար ո՞ն մը պահէ իր սրտին մէջ :

« Թաքլիմ երբ անցեալ օր ծա-նոյց թէ 30000 էն աւելի Հայ կայ կամաւոր Օսմանեան բանակին մէջ , բոլոր մահմետականաց սիրտը ուրա-խութեամբ լցուեցաւ , անոնց հետ մէկտեղ բոլոր Հայոց ազգը մեծ ու-րախութիւն զգաց , վասն զի թէ և 30000 կամաւորք մեծ բան մը չէ Օս-մանեան բանակին համար , թէ և 30000 Հայը մեծ բան մը չէ երեք մի-լիոն թուրքից Հայ ժողովրդոց հա-մար , բայց սկզբունքը մեծ է , այն է՝ զինակից բլլալ Օսմանեան բանա-կին և դորձով հաստատել թէ մեք զմեզ բաղդակից կը համարինք Օս-մանցւոյն : Այս մեծ օգուտ ունի մեր ներկային և ապագային . ներկային համար ռամիկ Տաճիկն կասկածը կը փարատէ , ապագային հաւար մեր հաւասարութեան իրաւունքը ար-եւամբ կը նուիրագործէ . ըսել է որ՝ փոքրիկ զոհոյութիւնները կարող են մեծ օգուտներ յառաջ բերել՝ եթէ այդ զոհոյութեան ժամանակը դիտ-նալու իմաստութիւնն ունենանք :

Լրագրոյս 1991 թուոյն մէջ « Տե-ղեկագրութիւն դաղթականութեան Հայոց ի Միւրտո—Վայաքիա , ի Հուն-դարիա և ի Լիհաստան » անուն նո-րատիպ գրքին հրատարակութիւնը ծանուցանելու առթիւ , յորդոր կար-գացեր էինք Պոլսոյ մէջ անշարժ գե-տեղեալ վերադարձուցաց ոմանց , որ փու-

խանակ հոռ հանգիստ նստելով իրենց որովայնը պարարելու և փոռ ասիրա-կան նկրամամբ մեքենայութիւններ նիւթ 'յոււ , անձնու իրական գործերով ազգին կարեացի ու կարօտութեանց օգնելու աշխատին , ինչպէս որ պար-տական են :

Մեր այս յանդիմանական յոր-դորը բնականաբար հաճոյ չըլլալով այդ անձնարած հովիւներուն , մէ-ջերէն մին նամակ մը միտներ է Ղա-լաթիոյ խմբակին բերանն եղող Հայ-րենիք անուն թերթին մէջ , և մեր վերոյիշեալ տողերէն էսքայարեան տրամաբանութեամբ անամթաբար եղրակացուցեր է թէ « Մասիս Հոյ Կէրէն Դիւանէ » , և թէ Բուր Ելեդե-ցանկէն ալ Դիւ Էրմէ Էրմէ :

Այս եղրակացութեան ստուծիւնը թէ և նոյն իսկ վերոյիշեալ տողերէն յայտնի կը տեսնուի , բայց մեք այդ անպատկառ ստախոսին փոքրիկ դաւ ան տալու և միանգամայն մեր եկե-ղեցական հարց պարկեշտ և ճշմար-տիւ կրօնասէր մասն՝ որ բարեբաղ-դաբար մեծագոյն մաս կը կազմեն , այդ քանի մը ճիշդութեամբ մանդոն-ներուն խաբէութիւններէն զոգու-ցընելու համար , կը յայտարարենք թէ Մասիս արդարեւ թշնամի է կեղծա-ւոր , փառասէր , հակառակասէր , խը-ռովասէր և իրենց սրբազան կուսմը չճանչող նկեղեցականաց . իսկ խըր-տէ կը սիրէ և կը յարգէ այն պատ-արժան եկեղեցականներն որք իրենց ուղղութեամբ , բարեպաշտութեամբ , պարկեշտութեամբ , և աւետարանա-կան հեղութեամբ Հայաստանեայց ե-կեղեցւոյ ճշմարիտ կրօնն են , ինչ-պէս որ մեր քոսնեւ վեցամեայ հըրա-տարակութիւններէն յայտնի կըտես-նուի , և ինչպէս վկայած են և կը վկայեն 26 ապրիլէ ի վեր երջանկա-յիշատակ Ներսէս և Մատթէոս կու-թողիկոսներէն , Կ. Պօլսոյ և Երու-սաղէմայ հոգեւոյ Պատրիարքներէն , և հարիւրաւոր հանգուցեալ և կեն-դանի արքեպիսկոպոսներէ , վար-դապետներէ և քահանայներէ առ մեզ ուղղեալ կոնգակներն ու նա-մակները , զորս յարգանք պահած ենք մեր քով , և որոյ ամենն ալ այդ խաբեւոյ նամակագրին ստու-ծիւնը կը խայտառականին :

Անպատկառ նամակագիրն իւր վե-րոյիշեալ ստուծեան իւր ապացոյց տրիշ սուտ մ'ալ գրորբ է . յՄասիս վերջին օրերս Նաթանեան Պօղոս վար-դապետին Սիւրապոլի և Ամասիոյ վիճակոց վրայ հրատարակած տեղե-կագրութիւնն , յորմէ օրինակ մ'ա-րեն զրկուած է եղեր , չէ բարեհա-ճած ծանուցմամբ հրատարակել :

Այս երկրորդ սուտը խայտառա-կելու համար բաւական կը համարինք Մասիսի 1992, և 1993 թիւերը ցու-ցընել , որոց մէջ յիշեալ գրքին հը-րատարակութիւնը խոշոր գիրերով ծանուցուած է :

ԹՂԹԱՅՈՒԹԻՆԷՐ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ


Կարին 25 յունիս 1877
... Խմբագրապետ Մասիս պատ-ւական լրագրոյ :

Նախորդ նամակաւ Ձեզ հաղորդեցի արդէն կայսերական զօրաց վերջերս ցու-

* Այս խօսքն ասիկց 15 օր առաջ Գադ. ժողովոյ ընտրեկեաց ցանկ պատ-րաստելու համար Ս. Պատրիարք հօր տու-նը գումարուած ժամանակին Գեր. Իգ-միրեան Մատթէոս եպիսկոպոսն ըսաւ մեզ : Մեր ալ հետեւեալ պատասխանը տուինք իրեն . « Սրբազան , եթէ այդ խօսքը տղէտ և տխմար մէկն ըսէր , նե-րելի էր , բայց ձեր բերնին մէջ ներքի չէ , վասն զի նոյն իսկ ձեր խղճին վկա-յութեան հակառակ է :

An eagle with spread wings, surrounded by stars and rays, perched on a banner.

Կ. Պօլիս Ղառաթիա Որինստեան և
ընկերաց Ամերիկայի Մացազան կը
մեկնուի, ապիւ Երբմակ կաա ներ, ու
սեղանի ծածկց և այլ, սեղանի
արծաթած պատառ աքաղ, գրքալ
և այլ. կագի Լամբոներ, սեղանի
ճերմակ յառնապակ սպառք Անգ-
ղիչ առանկն, քարկոլաններ, լիբը
ծածկց, քլանն սալի և այլն, իա
հաննցի վերարբերալ անթմնիւր, կա-
րի գործըններ, և ուրիշ անթիւ պի-
տանի վաճառք կը ծախուին չափա-
ւոր գներով:



ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ ԲԱՆՈՂ ՇՈՊԵՆԱԻՆԵՐԸ

11 30 Ե՛հ նիմաճալլէն, Պէ՛յրիւքա՛ւ, Թա՛րապ, Ե՛հ նիք, Սթ՛էն,
Էմի՛րկ, Բ. Հիսա՛ր, Պէ՛պէք, Արնա՛լ, Օրթա՛ք, Պէ՛շիկ ։

14 45 Արնա՛լուաքէ՛յն, Գու՛րուչ, Օրթա՛ք, Պէ՛շիկ, Գապա՛թ,
12 Պէ՛քօղ, Բաշա՛պ, Գա՛նլ, Ա. Հիսա՛ր ։ Գա՛նտ, Վա՛նիք,
Չէ՛նկ, Պէ՛յլ, Գու՛զկ ։

12 30 Բ. և Ա. Գա՛վազէ՛ն, Մէ՛զարա՛լ, Պէ՛յրիւքա՛ւ, Թա՛րապ, Ե՛հ
Նիքէ՛յ, Պոյա՛ճ, Բ. Հիսա՛ր, Պէ՛պէք, Արնա՛լուաքէ՛յն, Գու՛-
րուչէ՛մք, Օրթա՛ք, Պէ՛շիկթա՛շ ։

1 30 Պէ՛յրիւքա՛ւ, Թա՛րապ, Պէ՛քօղ, Բաշա՛պ, Գա՛նլ, Ա. Հիսա՛ր,
Գա՛նտ, Վա՛նիք, Չէ՛նկ, Պէ՛յլ, Գու՛զկ, Գապա՛թաշ ։

2 Ե՛հ նիմաճ, Մէ՛զարա՛լ, Պէ՛յրիւքա՛ւ, Թա՛րապ, Ե՛հ նիք, Սթ՛էն,
Էմի՛րկ, Բ. Հիսա՛ր, Պէ՛պէք, Արնա՛լուաքէ՛յն, Գու՛րուչ,
Օրթա՛ք, Պէ՛շիկթա՛շ ։

3 Պէ՛յրիւքա՛ւ, Պէ՛քօղ, Բաշա՛պ, Բիթա՛լիթ փ. մաճ, Գա՛նլ, Ա.
Հիսա՛ր, Գա՛նտ, Վա՛նիք, Չէ՛նկ, Պէ՛յլէր, Գու՛զիուճուճք ։

3 30 Մէ՛զարա՛լ, Պէ՛յրիւքա՛ւ, Թա՛րապ, Ե՛հ նիք, Սթ՛էն, Էմի՛րկ, Պո-
յաճ, Բ. Հիսա՛ր, Պէ՛պէք, Արնա՛լ, Գու՛ր, Օրթա՛ք, Պէ՛շիկ
5 Ե՛հ նիմ, Պէ՛յրիւքա՛ւ, Թա՛րապ, Ե՛հ նիք, Էմի՛րկ, Բ. Հիսա՛ր,
Արնա՛լ, Պէ՛յլէր, Օրթա՛ք, Պէ՛շիկթա՛շ ։

6 15 Ե՛հ նիմ, Պէ՛յրիւքա՛ւ, Թա՛րապ, Պէ՛քօղ, Ե՛հ նիք, Էմի՛րկ,
Գա՛նլ, Բ. և Ա. Հիսա՛ր, Գա՛նտ, Արնա՛լ, Չէ՛նկ, Պէ՛յլ,
Օրթա՛ք, Գու՛զկ, Պէ՛շիկ, Իսա՛լիւտար ։

7 45 Ա. և Բ. Գա՛վազէ՛ն, Մէ՛զարա՛լ, Պէ՛յրիւքա՛ւ, Թա՛րապիւր,
Ե՛հ նիք, Էմի՛րկէն, Բ. Հիսա՛ր, Արնա՛լուաքէ՛յն, Օրթա՛քէ՛յ
Պէ՛շիկ ։

8 45 Մէ՛զարա՛լ, Պէ՛յրիւքա՛ւ, Թա՛րապ, Պէ՛քօղ, Սթ՛էն, Պոյա՛ճ, Պէ՛-
պէք, Արնա՛լ, Գու՛րուչ, Օրթա՛ք, Պէ՛շիկթա՛շ ։

8 45 Պէ՛յրիւքա՛ւ, Պէ՛քօղ, Բաշա՛պ, Բ. փաշա մաճ, Գա՛նլ, Ա. Հի-
սա՛ր, Գա՛նտ, Վա՛նիք, Չէ՛նկ, Պէ՛յլ, Գու՛զկ, Իսա՛լ ։

9 45 Ե՛հ նիմաճ, Մէ՛զարա՛լ, Պէ՛յրիւքա՛ւ, Թա՛րապ, Ե՛հ նիք, Էմի՛րկ,
Բ. Հիսա՛ր, Արնա՛լ, Օրթա՛ք, Պէ՛շիկթա՛շ ։

11 Մէ՛զարա՛լ, Պէ՛յրիւքա՛ւ, Թա՛րապ, Ե՛հ նիք, Էմի՛րկ, Արնա՛լ,
Օրթա՛ք, Պէ՛շիկթա՛շ ։

12 30 Պէշիկթաշ, Օրթաք. Արհամ. Պէշպէք, Բ. Հիսար, Պոյաճ.
Ենիբէ թարապ. Պէշպէք
1 Գաղաթաճ, Իսսի. Պէշիկ. Գաղաճ. Օրթաք. Պէժ. Չէնի
Արհամ. Գաւնտ. Ա. Ե Բ. Հիսար, Գաւն. Էմիրի. Ենիբէ
Պէժազ. Թարապ. Պէշիկթաշ. Ենիբաճ:

1 45 Պէշիկի • Օրթմաք • Գուրուչ • Արնամփ • Պէշպէք, Բ • Հիսար,
Էմիրիկ, Ենէիքէյ • Թարապ • Պէշպէք • Մէշարապուրնու
3 Պէշիկիմաշ, Օրթմաք • Արնամփ • Բ • Հիսար, Էմիրիկէն, Սիժէն
Ենէիքէյ, Թարապիս, Պէշպէքուրէն, Ենէիքուսալէն :
3 30 Իսակիւտար, Գուրիկ, Պէշ, Չէնիկ, Վանիք, Գանտ. Ա. Հիսար,
Գանի. Բ. Գուշա մուշ, Բաշ Պէշքոզ, Պէշպէք • Մէշ,
4 45 Պէշիկիմաշ, Օրթմաք • Արնամփ • Բ • Հիսար, Էմիրիկէն, Ենէիք,
Պէշքոզ, Թար. Պէշպէք • Մէշ, Բ. Ա. Գամազ,
6 30 Իսակիւտար, Պէշիկի. Գուրիկ, Օրթմաք • Պէշ, Չէնիկ • Արնամփ •
Ա. Ա. Բ. Հիսար, Էմիրիկ, Ենէիք, Պէշքոզ, Պէշպէք :
8 Պէշիկիմաշ, Օրթմաք • Արնամփ • Բ • Հիսար, Էմիրիկ • Ենէիք,
Թարապ. Պէշպէք • Ենէիքուշ :
9 Պէշիկիմաշ, Օրթմաք • Արնամփ • Բ • Հիսար, Պոյաճ. Ենէիքէյ,
Թարապիս, Պէշպէք • Մէշարապ :
10 20 Պէշիկիմաշ, Օրթմաք • Արնամփ • Պէշպէք, Բ • Հիսար, Էմիրիկէն,
Ենէիք, Թարապ. Պէշպէք • Մէշար. Ենէիք. Գամազ ներս,
10 20 Գուրիկուշուք, Պէշ, Չէնիկ, Վանիք, Գանտ. Ա. Հիսար,
Գանի. Բ. Գուշա մուշ, Բաշար. Պէշքոզ, Թարապ. Պէշպէք :
11 Պէշիկիմաշ, Օրթմաք • Գուրուչ • Արնամփ • Պէշպէք, Բ • Հիսար,
Էմիրիկէն • Սիժէն. Ենէիք. Թարապ. Քիւրիճպ. Պէշպէք :
11 Գապիմաշ, Գուրիկ, Պէշ, Չէնիկ, Վանիք. Ա. Հիսար,
Գանի. Բաշար. Պէշքոզ :
11 35 Պէշիկիմաշ, Գուրիկ. Օրթմաք • Պէշ, Չէնիկ • Արնամփ •
12 Պէշիկիմաշ, Օրթմաք • Գուրուչ • Արնամփ :

ჰაიფ	ჰაიფ	ჰაიფ	ჰაიფ
11 30	6 5	11 45	6 25
12	6 35	12 10	8
12 30	8 15	12 45	8 30
1	8 40	1 15	9 5
1 30	9 15	1 40	9 35
2	9 45	2 15	10
2 30	10 5	2 45	10 25
3	10 25	3 10	10 50
3 30	10 50	3 45	11 10
4	11 15	4 15	11 30
4 30	11 30	4 50	11 40
5	12	5 15	12 5
5 30		6	

ժամ	ժամ	ժամ	ժամ
11 45	6	11 45	5 50
12 15	6 35	12 15	6 25
12 45	8	12 45	8
1 15	8 40 Պէշթըր	1 15	8 45
1 50	9 20	1 50	9 20
2 30	10	2 30	10
3 15	10 30	3 15	10 35
4	11	4	11 5
4 35	11 30	4 30	11 35
5 15	12	5 15 Պէշթ.	12 5



ገጽ ፖላሳዊ 1873 ኛው ቅጽ ላይ ያለውን ማሳሰቢያ ይጻፉ



QUINA LAROCHE
ԷԼԻՔՍԻՐ

ԵՐԵՎ ՔԷՆՔԻՆԱՅԻՅԵ ԱՄԵՆ ՍԿԶԻՌԻՆՔԸ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ

Գլխաւ Լարօշ խխտ ակորժահամ
էլիւրիսի մ'է, որոյ քէնքիւնայի գիւնի
ներէն ու շուրուաներէն ունեցած
մեծ գերազանցութիւնը քան տարիէ
'ի վեր հաստատուած է, ուժի տկա
րութեան, ստամոքսի հիւանդու
թեանց, հին ջերմերու և այլքը դէմ:

Նոյն երկրի, թափոխի, այսինքն երկաթային աղի մը քէնքիւնայի հետ բազալտը թիւն, որ արեւան նուազութեան, փլորո-անէմիի, ծննդաբերութեան հետեւեանաց և այլոց դէմ կ'ապաստորուի :

Փարիզ Տրուօ փողոց 22 և ամեն դեղավաճառաց քով:

Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

ՀԳԳԵՀԻ ԴԷՄ ԱՊՍԶՈՎՈՒԹԻՒՆ

NORTH BRITISH AND
MERCANTILE
INSURANCE COMPANY

ՆՕՐԹՀ ՊՐԻԹԻՇ ԷՆՏ ՄԷՐԳԷՆԹԱՅԼ
 Լ՝ԿԵՐ ԵՒ Լ՝ԿԵՐԿՈՒՄ ԵՒ ԿՈՒՄԻՏԵ
 ԵՒ ԿՈՒՄԻՏԵ ՄԷՐԳԷՆԹԱՅԼ

Քառանդորդագրեալ դրամադրութիւն 2,000,000
Վճարեալ դրամադրութիւն 250,000
Պահեստի դրամ հրդեհ
Հի ճիւղէն դրամեալ 1,040,744-1,290,744
1875ին հրդեհի գուռ հասողթր 917,178

Ստորագրեալք իրենց բազմաթիւ յաճախորդաց և այս քաղաքիս ընդհանուր հասարակութեան կը ծանուցանեն որ իրենք վերցյալ ալ երկու ընկերութեանց միացեալ աշխատակարար ընտրութեամբ ըլլալով, այնպիսի դրուութեան մը մէջ կը գտնուին, որով հրդեհի զէմ ապահովութեան մեծ գործունէներ կը մատուցանեն ։

Ապահովութեանց կարգադրութիւնները կը բաղկանան երկու ընկերութեանց՝ իջնամաստական բաժանումէ մը և քայտիս ապահովութեան և ղիւրութեան աւելնալովն ։ Ընկերութիւնս ալ կրնայ աւելի մեծագումար ապահովութիւն բռնուաներու ինքդինք ներկայացունել ։

Գրեթե ամեն կարգի վտանգաւոր ազաճովութիւնք կրնան ընդունուիլ ինչպէս Բերայի Ղալաթիոյ և Պօլսոյ մէջ, նոյնպէս մօտակայ քաղաքները գիւղերը և դաւառները :

Գլխերուն և աւելի մանրամասն տեղեկութեանց համար պէտք է զխմել Գր. Բաղդադի ընկերութեանց զրօսանեակը Ղալաթիոյ Բէրլէմպէ բազարի մօտ Լապանի խան թիւ 5 ։

Իրազոր գործակատար
Վ. Բ. ՈՂԻՍՅ.